

39

S-46

06 APR 2010

873

ՄԻՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԱՆՈՒԻԼԵՆ

Ե Ե Զ Ի Դ Ի Ծ

# ԿՈՒՐՄԱՆԺ

Էջիմ-Ջյրմանջ

39  
S-46

Ա.ԽԱՆՍԻ

Սրան Սրբ. Մաշտոցի տպարանի  
1910

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ

46

ՍԻՐՆ ՎԱՐԿԱՅԵՆ ՏԷՐ-ՄԱՆՈՒԻԼԵՆ

Հայկ. գրքատ. հայկ. Արմատիկ  
Արմատիկ Գր. #. Արմատիկ

39

8-46

4

Ե Ե Զ Ի Դ Ի

# ԿՈՒՐՄԱՆԺ

Եզուծու-Նյրմանիշ



Ա.ԽԱԼՑԻԱ

Տպարան Եղբ. Մարտիրոսեաններ

1910

20 AUG 2013

*Handwritten notes in Armenian script, partially illegible.*


### ՀԱՄԱՌՕՏԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ՝ ՎԻՉԱՊԱԶՈՒՆ— ԵԶԻԴԻ ԿՈՒՐՄԱՆԺՆԵՐԻ:

«Եւ այժմ ահն գուարձացայց՝ ոչ փոքր  
ինչ կրելով խնդութիւն, հասանելով է տեղիս  
մերում բնիկ հախնուոյն՝ յորում սերունդք է  
թագաւորութեան հասանին յաստիճան...  
Վարբակէս մետացի թագաւորութեան ձև և  
չուք խոստանալով (Պարոյրի) նմա և բաղմամ-  
բոխս յարի արանց, և որ է տէգ նիզակի և  
յաղիղն և է սուսեր աջողածեոք, և այսպէս  
զթագաւորութիւնն է Սարդանապալայ լինքն  
առեալ տիրէ Ասորեստանի և Նինուէի»:  
(Խորենացի Գ. Ա. գլ. ԻԱ)

#### I.

Նախ՝ երկու խօսք Մետացի Եզդիների՝ հայերիս հետ  
ունեցած դաշնակցական վաղեմի անցեալից:

Սոյն պատմական անսութեանս ճակատումն արձանա-  
գրուած՝ «Եւ այժմ ահա՛ գուարձացայց՝ ոչ փոքր ինչ կրե-  
լով խնդութիւն...» դոյզն՝ սակայն ուշագրաւ նկարագրից՝  
լոյսի պէս արտացոլում է Խորենացու սրտի խնդագին ու-  
րախութեան գերագոյն բերկրանքն՝ յանձին իւր սիրեցեալ  
հարազատի՝ հայկազն Պարոյրի առաջին պսակադիր թա-  
գաւորի անդրանիկ թագակրութեան՝ մետացի Վարբակէս  
վիշապագուն մարից...:



1404-51

Եւ այսպէս՝ Պարոյրի թագադիր թագաւորութեամբն՝ ոչ միայն Հայաստանի աւատական վասալականութիւնը վերածուում է քաղաքացիական մի ամփոփ արքայական գերիշխանութեան, այլ և ստեղծուում է մի քաղաքա-կուլ-տուրական դաշնակցութիւն շրջակայ պետութիւնների, որպէս և հայոցս վիշապագուն մարաց հետ՝—այն ժամեանն հուժկու պետութիւններից մէկի, որի հարազատ շառաւիղն են կազմում ներկայիս Եգիպտոսի կուրմանժներն:

Հէնց այն օրերում ի դէպ ծագում է պատերազմ՝ մետացի մարաց և ասորոց մէջ, Պարոյրն որպէս թագաւորի դաշնակից մար պետութեան՝ իւրն «արի արակց» խիզախ քաջերով շտապում է օգնութեան մարաց Վարբակէսին՝ ասորական հզօր պետութեան Սարգանաբալլի դէմ. «Սա (Պարոյր) ոչ փոքր ինչ օգնորիւն գտեալ ի Վարբակայ Մարէ», ուրանօր ի շնորհս հայ քաջերի յաջողում է Վարբակէսին՝ յաղթող հանդիսանալու և տիրանալու հզօր Ասորեստանին... Եւ այնուհետև՝ երկար ժամանակ պահուում է թէ՛ այդ քաղաքա-դաշնակցական կապն, և թէ՛ բարեկամական և դրացիական մերձ յարաբերութիւնը մեր երկու դրացի դաշնակից ազգերիս մէջ...:

Պատմականից որպէս նախերգանք՝ այս երկու տողն էլ բաւական թուեցաւ ինձ, որովհետև՝ մենք առանց այն էլ մեր ձեռնարկած Խորենացու ուսումնասիրութեան գործում՝ «Նորագոյն յուսարակոտրիւն Խորենացու», յաճախ ի դէպ՝ պատեհ-առիթ պիտ ունենանք խօսելու մարաց՝ մեզ հետ ունեցած մերձ յարաբերութեան վերաբերեալ, մանաւանդ՝ արկածալիրն դիւցազն Արտաւազդի՝ և նրա ունեցած իրաւացին նախանձայոյզն հակաիրանաց՝ դէպի մար մեզացիները, որոնց յաջողուել էր՝ Արտաշէսին և Սաթրենիկին ինչ-ինչ միտմնաւոր հրապուրանքներով թովելու, որպէս և բոլոր պալատականներին, բացի հեռանկատ քաջազն, հանճարեղ Արտաւազդից, որին քաջ յայտնի էր նրանց նենգամիտ դաւադրութիւնը:

Ըստորում դառնանք այնժամեան մար վիշապագունների սերունդ՝ կուրմանժ Եգիպտոսի ընդհանուր նկարագրութեան:

Բիւրասպն (հազարաձի) Աշղահակի շառաւիղ՝ ներկայիս Եգիպտոսը՝ թէպէտ և դուժ բազդի անողօք մղումներով որպէս վայրագ համարուած՝ մի բուն վրանաբնակ խաշնարածների՝ ապրում են այսօր Հայաստանի կենդրոնական և հարաւային լեռնամասերում՝ ապաւինած իրենց խաշնարածութեան, որսորդութեան, և որ գլխաւորն է, տնային ձեռագործական արուեստի արդիւնաբերութեան, բայց և այնպէս այդ ընկճուած, դժխեմ կացութիւնը և կրած տառապալից զրկանքը անգօր են գտնուել իսպառ անհետ ջնջելու նրանց իւրայնայատուկ աշխոյժը, վառ կորովը և պատերազմասէր անյողգողգ բնոյթն քաջ:

Բնական է՝ որ ձախողակի հրատապ հանգամանքները չէին խնայի թողնելու ընդհանրապէս և իրենց բացասական ծանր տպաւորութիւնները խեղճ կուրմանժ ժողովրդի վերայ, և թողել են արգարև:

Չնայած եգիպտոսի դառն վիճակին՝ և համապարփակ մտաւոր տգիտութեան և փոքրամասնութեան, բայց և այնպէս՝ շատ ուշադրաւ են իրենց գովելի առանձնայատուկութիւններով, որպիսիք յատուկ են մեծ ազգերի շառաւիղներից սերուածներին առ հասարակ:

Թէպէտ՝ երբեմն-երբեմն տրուել են հարևանցի տեղեկութիւններ՝ սրանց վերաբերեալ՝—սակայն ցաւալին է, որ ըստ մեծի մասին հիմնուած են եղել թիւրիմացն պատահականութիւնների վերայ, որև ի դէպ զգացի՝ մերովսանն համառօտակի պատկերացնելու երկտողով՝ դիւցազն բիւրասպ մար-Աշղահակի շառաւիղներին՝ որքան հնարաւորն էր իւրն իսկութեամբ:—

Ակներև է, որ Եկբատանի՝—երբեմնի մեծ պետութեան՝ վերջին մեզացի մնացորդ կուրմանժ եգիպտոսը՝ հազիւ ու-

րեմն կարողանալով ազատուել՝ ֆանատիկ իսլամութեան նախճիրներից՝ դոյն իսկ և քրիստոնէութեան խժոժային բռնութիւններից, յարատեւել են իրենց նախնի բնութապաշտ դաւանանքի ուրուականի մէջ. բայց որովհետեւ իրենց այդ ինքնուրոյն դաւանութեամբ՝ բարեբաղդաբար՝ չեն պատկանում ներկայ թագաւորած կրօններից և ոչ մէկին կամ միւսին, հետեաբար՝ ընդհանրապէս ամենքիցն էլ կուրօրէն ճանաչուած են և կարծուած՝ որպէս անկրօն ժողովուրդ՝ նոյն իսկ և իրենց արեւակից՝ մահմետականութեան՝ գիրկը ընկած՝ հարազատներից, ըստ որում և ամենքիցն էլ միապէս չարաչար արհամարհուած ու անարգուած:

Մահմետական դարձած քուրդերն պահպանել են միայն եզդիական տարազն և լեզուն, վերջիններս որպէս ազգուրաց, հաւատուրաց դաւաճաններ՝ չափազանց ատելի են կուրմանժ եզդիներին:

II.

ԵԶԻԴԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԴԱՒԱՆԱՆՔԸ՝ ԵՒ ԵՒՍԸՎԱՆ ՆԱԽԱՊԱՀԱՐՄՈՒՆՔՆԵՐԸ:

Եզդիին՝ բոլոր սրտով և հոգևով դաւանում և հաւատում է մի ստեղծող-արարող Աստուած երկնքում, հաւատում է և նրա երկնային գօրութեան և փառքին և նրա իմաստուն, անսահման նախախնամող տեսչութեան:

Եզդիական կրօնի զաղափարական վեհութիւնը կայանում է հաւատացեալի անվեհեր քաջութեան և ճշմարիտ ազնւութեան մէջ՝ որը և կազմում է անպաճոյճ, սակայն ոչ անխորհուրդ՝ եզակի, անարուեստ, դաւանանքի մակարդն —, դաւանանք, որի լուրջ ուսումնասիրութիւնից իսկապէս շատ բան կայ կախուած՝ զլիսաւորապէս զիտութեան և կրօնների պատմութեան լուսաբանութեան, թեքեա՝ սա ոմանց չափազանցութիւն թուի, բայց ոչ:

Նշանակալից է նրանց յարգանքի անաչառ և անխտիր տածումն, որպէս յանձին բարի հրեշտակ հոգիների, այնպէս և համայն աշխարհից ուխտադրուժ՝ համարուած չար հրեշտակ հոգիների:

Ինչպէս ասացինք և ակներև է, որ վերջիններիս՝ ողջոյն մարդկութիւնը անողոք կերպով անիծել է և անիծում է՝ սաղայէլ, նեո, չար հրեշտակ, չար հոգի, աներևոյթ թշնամի, դե, սատանայ... հայհոյական անուններով, մինչդեռ մէն միայն եզդին է, որ աւելի քան զիտալիը սիրով և հաւատով պաշտելու չափ յարգում է այդ թշուառացած և աստուածանից պատուհասուած հրեշտակների անբաղդ դասին, հակընդէպ կրօնական համոզման ընդհանուր մարդկութեան. սակայն ոչ երբէք սարսափի, երկիւղի ազդեցութեան ներքոյ, ոչ՝ այլ ի վարմանս մարդասիրականն սեպուն կարեկցութեան՝ սուրբ զգացմունքի՝ յանձին գրկուածի, տանջուածի... սրտացաւ գլխութեան և արգահատութեան:

Եզիզին՝ իւր սա կարեկցական ազնիւ վերաբերմունքն՝ բացատրում է՝ զուտ փիլիսոփայական առողջ եզրադատութեամբ: —

Նա ասում է՝— ոչ ապաքէն մարդկային վեհ և սեպուհ պարտականութիւնն է՝— թշուառին կարեկցելն, արգահատելն. . . չէ որ վերջապէս դրանք և այդպիսիք առ հասարակ՝ որպէս տանջուածներ, տեղի թէ անտեղի դատապարտուածներ՝ աւելի քան կարօտ են կարեկիցն գլխութեան... և եթէ մեզանչել են, մեզանչել են իրենց երկնային ստեղծողի դէմ, մենք իրաւունք ունինք արդեօք՝ խառնուելու Բարձրեալի նախախնամութեան և նրա փառաբանիչ լոյս և հոգի երկնային անմարմին զօրութեան և նրանց՝ մեզինց միանգամայն անկախ եղած առնչական յարաբերութեան, որպիսին նամանաւանդ՝ ոչ միայն ի վեր է, այլև անհասանելի մահկանացու հողածիններիս տկար իմացականութեան, և ո՞վ գիտէ անեզր սիրոյ և ներողամիտ թողութեան քարոզ՝ ամենողորմ, անյիշաչար Աստուածը՝ մի օր դարձեալ վերստին կոչելու չէ, կամ արդեօք՝ չէ կոչել արդէն իսկ իւրն ըմբոստ՝ երբեմնի փառաբանիչ յաւիտենական հոգիներին...:

Ո՛հ քանի վեհանձնութիւն... քանի պատիւ՝ յանձին նախնի մարդկութեան հոգեկան սեպուհ բարձրութեան և նորա ազնուութեան վեհ գաղափարին, որպիսին լրիւ իւրով բացակայում է այսօր կրօնականի և քաղաքականութեան արտաքնով շլացած մարդկայինս լուսաւոր և յառաջադէմ կարծուած մեծամեծ ազգութիւններից և նրանց կրօններից:

Եւ անձ՝ Եզիզի կուրմանժն գրեհ՝ թէ ողջոյն աշխարհից՝ չար հոգի, չար հրեշտակ, դև, սատանայ և համայն մարդկութեան թշնամի համարուածներին՝ իրենց կաթողին սիրելի մայրերի եղբայրներն են համարում և ընդունում և նրանց անունն՝ *Ֆեռի՝* մտերմական բառով կանչում՝— «*Մոր եղբայր*»:

Նրանք ուղղակի սարսափում են, երբ լսում են ո և է մի աննպաստ, կոպիտ, գոեհկական ակնարկ իրենց հալածուած պաշտելի քեռիների հասցէին, և իսկոյն լցում են զայրոյթի արդար վրէժխնդրութեան և բուռն ատելութեան նախանձով՝ ընդդէմ այդպիսիների վարկաբարձի դանդաշանքների: Եւ ինչպէս հաւաստիանալու ենք Խորենացու Ա. գրքի յաւելուածից՝ նոր չէ այդ, այլ նախապատմական դարերից սկսած՝ կայ դրանցում ջերմ յարգանք մատուցանելու սովորութիւնը հրեշտակային այդ սաղայէլական կոչուած դասին:

Ուշագրաւ է որ միաժամանակ սոյնանման մարդավայել բարի-բարի զգացմունքներով տոգորուած են՝ յանձին անաղարտ պահպանութեան իրենց բոլոր աւանդական սովորութիւնների և նախնական կարգերի:

Ի ստուգութիւն բանիցս՝ յանձին եղզիական դաւանաբանական լայն և ուղղամիտ դոգմատական հայեացքների՝ աստանօր ի դէպ համարեցի դնել աշխարհահուշակ Պուշկինի—«*Путешествіе въ Эрзерумъ*» ճանապարհորդական նկարագրից, նորա առ տեղեան ունեցած «*հետաքրքրականն հաւաստիացումից՝ երկու տող*».—«*Язиды вѣрують въ единого Бога. По ихъ закону, проклинать дьявола, правда, почитается неприличнымъ и неблагороднымъ, ибо онъ теперь несчастливъ, но со временемъ, можетъ быть, прощенъ, ибо нельзя положить предѣловъ милосердію Аллаха... Я очень радъ былъ за Язидовъ, что они сатанѣ не поклоняются, и заблужденія ихъ показали мнѣ уже гораздо простительные.*»

Пушкинъ.

Միանգամայն անկախ վերոյգրեալից՝ դնում եմ մի փոքրիկ զուգատիպ միջնադէպ դարձեալ Պուշկինից՝ հայերիս վերաբերեալ՝ նոյն 1829 թուում՝ տեղի ունեցածն էր-զրումում՝ Ռուսական հզօր բանակի առաջին յաղթական



մուտքի ժամանակ՝ «Турки съ плоскихъ кровель своихъ угрюмо смотрѣли на насъ. Армяне шумно толпились въ тѣсныхъ улицахъ. Ихъ мальчишки бѣжали передъ нашими лошадьми, крестясь и повторяя: Христіанъ! Христіанъ!».

Пушкинъ

Պուրմանժ եզիզինները իրենց յուզարկաւորութեան հանդէսները և թափօրները՝ սիրում են կատարել շքով և հանդիսաւոր մեծ լալիւնով, սովորաբար հրաւիրում են՝ լալկան երգիչ կանայք և օրիորդներ (*գուսանկեր*), որոնք լալահառաչ ողբերգականներով երգում են աղեկտուր լօ՛ւնեք՝ կոծելով գլուխները մեծ սուզ ու շիւանով:

Ազիզ ննջեցեալի յուզարկաւորութեան՝ թափօրի առջևից տանում են նորա սիրելի սգապատ զարգարած հատքէհլանը (*ևժոյզը*), խոյն, եզն..., մէկն միւսի յետևից գընում են տխուր գլխակոր..., թլում է մարդու, թէ անբան կենդանիներն անգամ՝ կարծես բնագոյով ներշնչուած և իսկապէս համակուած վերահաս մահուան թշուառութեան աղէտով՝ գիտակցում են սև օրուայ խորհրդաւորութիւնը: Ի զարմանս նկատում է և նրանց տխրած աչքերի վերայ մինչ-իսկ գիւ ի գիւ գլորուող բիւրեղային կաթիլներ դառն արտասոււնքի, որպիսի մի հանդիսի՝ մանկութեանս օրերում հանդիսատես լինելու բազդն եմ ունեցել:

Եզիզին ընդունում է հոգու անմահութեան աղօտ, վերացական գաղափարը՝ բայց ոչ մահմետականութեան ցնորամիտ երևակայութիւններով, այլ աւելի քան բարձր և վեհ, և դորա համար ևս իւր հանպուցեալի մեղքերի քաւութեան համար՝ պատրուճակներ (*մասադի կեներանկեր*) է գոհում, և ազբատներին ողորմութիւն—մատաղ բաժանում: Գլխաւոր կերակուրն հոգեհացի համարում է մեղրով և իւզով խորիսխն (*հարուէն*):

Յուզարկաւորութեան և թաղման համար՝ որոշ ծիսակատարական, գրաւոր արարողութիւններ չունին, ինչ որ

աւանդաբար մնացել է, այն է, որ և կատարում է՝ շեխի կամ փրի բանաւոր աղօթքներով և տխուր մելամաղձոտ երգերով:

Ննջեցեալին թաղում են՝ ոչ մեր՝—քրիստոնեաներիս ձևով և օրինակով, այլ ուղղակի նստեցրած խորունկ փորած խուզանման գերեզմանի մէջ, երեսը դէպի հարաւարեւելք դարձրած, ապա գերեզմանի բերանը ծածկում են խնամքով:

Յուզարկաւորութեան և թաղման ժամանակ՝ սովորաբար շեխն է լինում հանդիսագիրն, իսկ նորա բացակայութեան դէպքում՝ փիրն:

Նրանց համոզմունքով՝ տաճարի հաւասար սուրբ է օջախն, որպէս և նորա կրակն, որը և է նրանց ուխտի երդման գլխաւոր և սրբազան մակարդն: Օջախին և կրակին որպէս ներկայացուցչի և պատկերի արեգակի, պաշտելու չափ յարգանք են մատուցանում, և մինչ իսկ երկրպագում—փառաբանում նորա հրաշափառ ծագման արշալոյսին:

Եզիզներն՝ իրենք իրենց երբէք քուրդ կամ եզիզի՝ օտարաձայն անունով չեն կանչում, որպիսի ցեղանունն այնքան էլ սիրելի չէ թլում իրենց, այլ առ հասարակ և միշտ «կուրեւակ», կուրմանժ ազգանունն՝ արտասանում են մի առանձին հոգեկան բաւականութեամբ, թէպէտ ցարդ պարզուած չէ՝ կուրմանժի ինչ նշանակելն, սակայն ինձ թլում է՝ այդ նշանական բառի «ուղղափառ»-ի իմաստ կրելն՝ և ոչ այլ ինչ:

Ունին մասնաւոր արարողութիւններ, որ շեխերի և փրերի միջոցաւ կատարում է տան մէջ՝ թոնրի շրթի շուրջը:

Այստեղ ակամայից յիշում եմ մերայինների ումանց երբեմնի ընդունած «քուրեակիցներ» անուանուած աղանդաւորութիւնը, որոնք իրենց պաշտամունքը թոնիրների շրթերի վերայ էին կատարում: Մեզանում հէնց այժմ իսկ ուր եկեղեցի չկայ, և կեղեցու բոլոր խորհուրդները՝ թոնրի

չրթի վերայ է կատարում՝ բացի պատարագից, գարմանալին այն է, որ թոնրի շուրջն կատարուածն աւելի քան սիրելի է ժողովրդին, և նրա հոգեբանութեան:

Կուրմանժ կրօնաւորները՝ որպէս կրօնական խորհրդանշան ունին ծոցերում խնամքով պահուած՝ սև մանուածոյ մագերից կծիկ՝ բազմաթիւ ասեղներով և քորոցներով, մագեայ այդ սև կծիկը՝ պահում է՝ գրեան թէ անտեսանելի թաքնութեան մէջ, և անմերձենալի է համարում նոյն իսկ իրենց ժողովրդին՝ նամանաւանդ՝ յանձին ոչ հաւատացեալների. վայ նրան՝ որ կ'համարձակուի ո՛ր է մի աննպաստ խօսք ուղղելու այդ սուրբ կծրկի հասցէին... և կուրմանժն շատ ուրախ կ'լինի իւր մահն տեսնել՝ քան լսել մի աննրպաստ ակնարկ այդ սուրբ կծրկի վերաբերեալ:

Ասեղներն ո՛չ միայն՝ սուրբ կծրկի մէջ են պահում, այլ և իրենց հանդերձների վերայ, իւրաքանչիւր մի կուրմանժ կամ կուրմանժուհի՝—պարտական է ճշտութեամբ կատարելու այդ փրկարար համարուած սովորութիւնը՝ զերծ պահելու աղագաւ իւր կեանքը բնութեան ներքին պատահարներից, և միևնոյն ժամանակ որոշուելու ոչ կուրմանժ անհաւատներից:—Ջարմանալի երևոյթ՝ ողջ աշխարհը իրենց է անհաւատ համարել և համարում, իսկ իրենք ամբողջ տիեզերական մարդկութեան:

Ասեղներ պահում են և նժոյգ ձիերի և պարարակ, գեղեցիկ հովու եզների ջլերի մէջ՝ նոյն նպատակաւ:

Ցանկարծակի հիւանդութիւնով բռնուածներին բժըշկում են ասեղների և դանակների մագնիսացումով, հետաքրքիր է այդ ժամանակ տեսնել առաձգականն ինքնաբերաբար կատարող անդադար փոխադարձն յօրանջումներ՝ բժշկողի և բժշկուողի միջև:

Մագնիսացման սա գործողութիւնը կատարելուց յետոյ՝ մագնիսացնողն մի քանի անգամ թքում է հիւանդի վերայ, որպէս և մագնիսացնող դանակների և ասեղների,

մի ինչ որ նգովք թափելով չար աչք կամ նազար ունեցողների հասցէին, և յետոյ մագնիսացման գործիքներն դնում է բարձերի տակ՝ մինչև չար նիաթ նազարով բռնուածի բժշկուելն, և արդարն՝ մի քանի ժամից յետոյ զգալապէս անցնում է հիւանդութիւնն:

Միջանկեալ պիտի ասել, որ դոյն այդ նախապաշարմունքի սովորութիւնները՝—թէ ասեղներ պահելու՝ և թէ այդ կերպ բժշկելու՝ վաղուց ի վեր արմատացել է և մեր հայերիս մէջ:—

Բնիկ հայ կիներ՝ հայ աղջիկը, հայ տղան խորապէս համոզուած են, որ իրենց վերայ ասեղներ չ'պահելու դէպքում՝ ենթարկուելու են դիւական աներևոյթ ազդեցութեան, և որ զգուելին է՝ գիշերային գարշ երազափորձութեան, վերջինս մահու չափ ծանր է, մանաւանդ որ և է հայ կնոջ համար և անտանելի իսկ:

Երազափորձութիւնն համարուել է և համարում է զարհուրելի սրբապղծութիւն՝ ըստ տիրող կրօնական աշխարհահայեցութեան բնիկների, որի գերակատար զգուելի հերոսը համարում են սատանին:

Երազափորձութեան նախապաշարմունքը նոր չէ, այլ շատ հին, որից իւր ժամանակին սարսափել է և ինքը Նարեկացին Ս. Գրիգոր, որն իւր «ի խորոց արտ» բղխած հոգեգմայլ, երկնասլաց աղօթքների մէջ՝ լալահառաչ պաղատում է՝ զերծ պահելու իւր անձը, մահճակալը, անկողինը դիւամոլեկան զաղիր ախտերից գիշերային երազափորձութեան:

Պանանց հետ պատահած երազափորձութիւնը՝—յայտնի է «ասսակոկոխ, սասակահար» անունով:

Եզիդի՝ բարձր՝ թէ ստորին կրօնական պաշտօնեաների յաջորդականութիւնը՝ սկզբից անտի ժառանգական է եղած և է՝ առանց բնաւ երբէք բացառութեան և խանգարման արտաքին որ և է միջամտութեան:

Ղեխութեան աստիճանը՝ կարելի է համեմատել՝ եպիսկոպոսութեան, իսկ փրութիւնը՝ քահանայութեան և զբարութեան հետ:

Սրբազան շխերը հագնում են ոսկեթել կարաններով ասեղնագործուած կարմիր մահուդից երկայնարդանց, փառաւոր զգեստներ, կարմիր կաշուց՝ կրնկաւոր կօշիկներ՝ փայլուն կոճակներով, գլխներին կրում են արախչիներ, մետաքսեայ սևագոյն փաթեթներով, իսկ փրերն ընդ հակառակն՝ ոտից զլուխ հագնում են թուխ սևագոյն, որպէս և վայելն է զուտ կրօնաւորների:

Պուշկինը՝ Տաճկահայաստանում իրեն հանդիպած քրդական կարմրագլխատ շխին՝ այսպէս է նկարագրում.—

“Начальникъ ихъ высокій, уродливый мужчина, въ красномъ плащѣ и черной шапкѣ...”

Փրերն առ հասարակ աւելի քան պաշտելի են ընդհանուրին իրենց առաքինի բնաւորութեան շնորհիւ, և վայելում են համավարապէս՝ գիտակցականն մեծ յարգանք և պատիւ:

Ղեխերն տարին մէկ կամ երկու անգամ՝ մեր երբեմնի նուիրակ շրջոյ եպիսկոպոսների՝ գեղեցիկ և խօրհրդաւոր օրինակով՝ այցելում են իրենց հօտին ամենուրեք ընդհանրապէս, նրանցը զիմաւորում է ժողովուրդն և մեծ յարգանքով ընդունում:

Եզդիները ևս՝ ըստ արևելեան սովորութեան առ հասարակ իրենց կրօնաւորների ձեռքերն են համբուրում ծնկաչոք համբոյրներով՝ նրանց ողջունելու ըոպէներում:

Կրօնական պաշտօնեաների համար չկան որոշ սահմանուած տուրքեր, ժողովուրդը ինքնաբերաբար շահում է իւր հոգևոր պետին՝ ինչքան և ինչպէս կամենում է, ընծայաբերում է՝ գլխաւորապէս գառն, մաքի, կապերտ, խալիչայ, իւղ, պանիր, բուրդ...:

Ղեխ՝ չ'պէտք է հասկանալ միայն կրօնականի սահմանափակ իմաստով՝ որպէս սոսկ կղերականի, այլ և որպէս տեսչի, հսկողի. սոյնն ապացուցանում է նրանց ցայսօր վայելած յարգանքի բարձրութեան չափը և իրենց կրած նախնի իշխանական զգեստի տարագն, որպիսին յիշեցնում է մերային երբեմնի՝ բղեշխական տարագն և իշխանութիւնը:

Ջարմանալի է և կուրմանժների շխ՝ և մեր բղեաշխն՝ կամ բղեշխն բառերի այդքան զուգատիպ նոյնանիշ և հոմանիշ լինելն:

Այս մասին մենք կասենք՝ ինչ պէտքն է «Աղու եւ բղեաշխ» բառերի Խ. Ն. լուսաբանութեան մէջ, հարկաւ ոչ ըստ Խորենացու, և ոչ ցարդ եղած մերային՝ թէ օտար բացատրութիւնների:

Չնայած շխի և շխութեան աստիճանի բարձրութեան՝ բայց և փիրն՝ որպէս իսկական տիպարի կրօնաւորութեան՝ աւելի քան նուիրական է և սիրելի և մօտիկ ժողովրդի սրտին և նրա հոգու մտապատկերին. օրինակ՝ երբ կամենում են մէկի կամ միւսի օջախի սրբութիւնը՝ կամ անձնական որ և է արժանապատուութիւնը ակնարկած լինել՝ միշտ փիր՝ նմանական բառով են արտայայտում, զոր օրինակ՝—X-ի օջախը՝—փրի օջախ է... փիր ունեցիր անփիր!.., փիր օլսուն...:

Փիր՝ ըստ ներքին բովանդակութեան նշանակում է՝— սուրբ, մաքուր, առաքինի, որն և սովորական գործածութեան մէջ է նոյն իմաստով և շրջապատ ազգերի խօսակցութեան մէջ և այժմ իսկ, փիր՝ նշանակում է՝ և դաստիարակութիւն.— երեսայոց փիր տուէք, անփիր են մեծացել, անփիր երեսան աւելի լաւ է չ'լինի...:

III.

ԵԶԴԻԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ  
ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԸ:

Պէտք է խոստովանած, որ եզդիներն իրենց մի քանի աչքի ընկնող բարեմասն յատկութիւնների հետ անբաժան պահպանել են արևելեան հիւրասէր հոգին մեծարողութեան, որպիսին ցայտուն կերպով արտայայտուում է նոցա ժպտալից ինքնաբաւական ղէմքերի վերայ՝ սիրայօժարն հիւրընկալութեան ըոպպէններում:

Պատուաւոր հիւրերին վերաբերում են՝ ըստ արևելեան քաղաքավարութեան՝ ձեռքերը կուրծքին կանգնած՝ պատրաստակամ ծառայութեամբ:

Նոցանում տակաւին տեականութեան մէջ է պատուաւոր հիւրերի ոտները լուանալու վաղնչական ոովորութիւնը արևելքի:

Երբ եկած հիւրը բազմ ունեցաւ ընդունուելու և ասպնջականութիւն գտնելու եզդու օջախում, կամ նորա վրանի տակ, նա այլ ևս օտար ոք չէ համարում, այլ այն տան պատուաւոր անդամ:

Կուրմանժն՝ ի գարմանս անյողողղ կացել-մնացել է ընտանեկան սրբութեան ամենամեծ հիմքի վերայ՝ — նա մի կին է առնում, որի հետ և սերտ կապում է ցմահ՝ ամուսնական փոխադարձն՝ գիտական սուրբ կապով, որոնք երդում և ուխտում են ապրելու իրենց վիճակուած տան յարկի տակ՝ որպէս այն տան հաստատութեան սիւներն և բեռնակիր զոյգ ամուսններն:

Եզդու համար անտանելի խորթ երևոյթ է լսելն անգամ կնոջ անբարոյականութեան, անհնազանդութեան համար յարուցուած ասպահարգանի խնդիրը, նա չէ կարող երևակայել թէ կինը կարող է երբ և իցէ դաւաճանել ամուսնական անկողնի սրբութիւնը և իւր մայրական սուրբ

պատիւը, որովհետև միանգամայն համակուած ամուսնութեան վեհ խորհրդաւորութեամբ՝ ընդունում և հաւատում են երկու անձի մէջ ամփոփուած մի հոգու զազափարը:

Անհաւատարմութեան հազուադէպ հանգամանքում — մեղաւոր ճանաչուածի դատախազը և բաժանարարը՝ հրացանի գնդակն է, կամ կուռ հարուածն ըրդական հատուտը պողովատիկ թրի, որ սլատրաստ կայ ական թօթափել անխնայ դատելու ընտանեկան սրբութիւնը դաւաճանողին:

Կուրմանժուհին՝ միաժամանակ իւր ամուսնու գործակից անբաժան ընկերն է, թէ խաշնաբաժական և թէ դաշտային բոլոր մեծ և փոքր գործերում՝ բացի որսորդականութիւնից, որ յատուկ է տղամարդոց: Կինն է և իւր տան ներքին գործի տնօրէնը, տէրը, մայրը, դաստիարակիչը և ամենայն ինչ կարգադրողը և կատարողը:

15-704

Օրիորդները՝ հարսնախօսութեան հանգամանքներում պէտք է ասած՝ աւելի շուտ գնահատուում են՝ իրենց անձնականն արժանաւորութիւնների և ծագման համեմատ, — սրբան անուանի, որքան գեղանի...՝ այնքան և գնահատելի և թանկագին, հարկաւ այդ ամենը տեղի է ունենում ըստ երևութականին ընծայի անուան տակ, որոնց համար ընծայարեւում են — Նժոյգ ձիեր, աղնիւ տեսակի եզներ, խոյեր, մաքիներ, շիշակներ, կաւուներ, խալիչայ, կապերտ, ոսկի, արծաթ... , բայց և այնպէս՝ չպէտք է ուրանալ, որ գեղեցիկ սեւը՝ մանաւանդ օրիորդն՝ մեծ արտօնութիւն և յարգանք է վայելում կուրմանժ ցեղի մէջ՝ քան միւս ազգութիւնների, եւ աւելի քան և ազատ է:

Քուրդը գրգուած մարդասիրութեան զգացմունքից՝ չի սիրում թողնել հարսնեկան ծախսերը ծանրանալու հարսանիքատիրոջ վերայ (փեսայացուի հօր), տեսնում էք, մէկը ձի է բաշխում, միւսը եզն..., լստ վաղեմի բարեացակամական գեղեցիկ սովորութեան և աւանդականութեան:

Կանացի գլխազարդերը և ձեռ՝ Աղուլեաց՝ կանացի



հին գլխազարդերին են նման, իսկ հանդերձները նման են Կարնի հայ կանացի հանդերձների տարազին, որպիսին տակաւին թովորական գործածութեան մէջ է Ախալցխայի և Ախալքալակի Կարնոյ գաղթականութեան կանանց շրջանում ընդհանրապէս շատ աննշան բացառութեամբ մոզայասէր նորերի:

Եզդուհի մանկամարդ տիկինն՝ որպէս և օրիորդն, բացի պարանոցը մանեակով, ձեռքի դաստակները ապարանջաններով (խալխալներով), ականջները գնտերով զարդարելուց, գեղազարդում են և քթի հրկ-ծայրակողմերն աստղազուլս, ականակապ քորոցներով, որպիսիք հանդիսաւոր օրերում հագցնում են դեռ մանկութիւնից աչ և ձախ ծակուած քթածակերի միջով:

Չկայ կուրմանժ գեղեցիկ սեռի մէջ մէկն՝ որի ճակատի կենդրօնը գեղեցկացրած չլինի արուեստական խորհրդանշան խալերի հոյլերով, որոնք կազմում են ճակատի կամարի գեղանի զարդն: Խալերի հոյլերով ոչ միայն ճակատներն են աստղադրոշմ նախշում, այլ և ձեռքերի դաստակներն որպէս և լանջակուրծքն և ստինքներն..., շարկաւ առաւելն քան թովչութիւն պարզեւելու անձին:

Կանացի անձնական դիւթիչ յատկութիւններից մինն է համարում և խալազարդ «խալո» լինելն, խալուն՝ անմահացրած է և ժողովրդական երգերում—(խալու ետր! խալու ջան! խալ խալ ետրիկ ջան!...)

Որովհետեւ մանկամարդ քրդուհու ընդունուած սիրելի սովորութիւններից մէկն է և ոտքերի սրունքների հոլանի՝ —(մերկ) թողնելն, ուստի սրունքի զարշապարի հետ միացող մասն ուլունազարդում է՝ ուլունէ բազմազան շարաններով, կամ անցնում է ուղղակի արծաթեայ մանեակներ, իսկ առաւել քան ազնիւ ուլուններով և աչքաուլուններով փարուած է լինում միշտ՝ մանկամարդ կուրմանժուհու մարմարեայ լանջազարանոցն և մագերի բարդ հիւսուածքների

ծայրափնջերն, նախշուն կարկուծն, որի միջով անցնում են մագերի բազմաթիւ ուտակները դէպի մէջքն:

Հանդերձների թևերի առաջին մասում շարում են արծաթեայ բոժոժիկներով ուլուններ՝ որոնցից յառաջացած արծաթաձայն ներդաշնակ զընգզընգոցներն—պատճառում են աշխոյժ և խանդ՝ թէ կրողներին և թէ լսողներին, ըստ որում և երգերում, որպէս և խօսակցութեան մէջ սովորական է զընգզընգան-ճընկճընկան՝ գովասանական բառերն՝ յանձին գեղանի աղջիկների և հարմների կրած զարդերի զընգզընգոցների և երգած անուշիկ լօլօների:

Ի մասնաւորի յարգի է կանացի շրջանում սև սաթի գործածութիւնը, որն որպէս դիւթական համարուած ուլուն՝ անհրաժեշտ է՝ իբր գերծ պահող միջոց՝ չար նիաթ նազարից, և որ գլխաւորն է, սիրագլիժ երիտասարդների սիրային վտանգի ակամայ ենթարկումից:

Կախարդական ուլունների վերաբերեալ մենք տուել ենք հարկաւոր բացատրութիւն՝ յանձին ասորական մեծ թագուհի Շամիրամի դիւթական ուլունների «Ուլունք Շամիրամայ» (1907 «Հովիւ» № 34.)

Ձեռագործը՝ մանաւանդ՝ համանի, խալիչայ, կապերտ... սովորական է քուրդ կնոջ համար, իւր անտեսական ծառայութեան գործերը կատարելուց յետոյ՝ ազատ ժամերումը նա սիրում է զբաղուել ձեռագործով,—գործում են և այժի մաղից փառաւոր և դիմացկուն թուխ վրաններ, որոնք ունին զարմանալի յատկութիւն արեգակի ճառագայթների և մանաւանդ անձրևների արգելման դէմ, եթէ նոյն իսկ հեղեղներ թափուին՝ մի կաթիլ սուղուիլ չի կարող քրդական մագեայ վրաններից ներս:

Քրդական համանի կոշուած երկերեսանի գեղեցիկ ծակոտիներով նուրբ անկարան կապերտները վաճառքի են հանում ոչ միայն Ռուսաստանի խորքերը, այլ և արտասահման անդամ: Ոչ փոքր յարգի են և քրդական խաւոտ խալիչաները, լօփ-կապերտները, զիլիներն...:

Քուրդ տղամարդը պատրաստում է գիւզամից (մի տարեկան գառան բրդից) ազնիւ և թանգազին քէշաներ (թաղիքներ) դանազան ձեւի և տեսակի: Ասիական ազգերի մէջ փոռածքի համար ամենագործածականը քէշէն է:

Քէշաները լմում են ձմեռնեց տներում արացիների հարուածներով, կամ կապելով մի լուծ եզնից՝ թաւալ-թաւալ շրջեցնում են փոզոցներով մինչև լաւ լմուիլն՝ նոր ձըգուած՝ մի, կամ մի քանի հատ քէշաների:

Հազարաւոր քրդուհիւների մէջ հազիւ և դունուրեք պատահի մէկն, որ ազատ և համարձակ ոստայնանկել (գարծեւ) չ'գիտենայ, մինչդեռ և ընդհակառակն՝ հազարաւոր հայուհիւների մէջ հազիւ թէ՛ դունուրեք լինի մէկն ոստայնանկող՝ մանաւանդ պարապատէր, մօզայամոլ նորերի:

Եզդուհուն սիրելի է անգազար գործի և աշխատութեան նուիրուելն՝ նոյն իսկ ճանապարհորդելիս և կամ գրօնելիս, նա համարեա թէ կանոնաւորապէս աշխատում է գործելով. նոյնպէս երբ զրացու տունը կամ վրանը զընալիս լինի՝ նա դարձեալ ձեռքերը ծալած չի գնայ, որ մի բոպէ անգամ իզուր վատնած չ'լինի իւր աշխատութեան ոսկէ ժամերից, կ'տեսնէք կամ գուլպայ գործելիս, կամ թէշին ձեռքին մանելիս, որը՝ տեղ-տեղ էլ ի գէպ կանգ է առնում և աջ ու ձախ հպարտօրէն դիտում բնութիւնը, և ապա իսկոյն վերստին ձեռքի բրդէ լի մանուածապատ թէշին՝ ոլորն-ոլորն պտոյտ տալիս աջ ազգրիցը քաշ արած մաշկեայ բարուանէկի վերայ և այնպէս շարունակում գնալն և վերադառնալն:

Բարուանէկն՝ 6—7՝ վերջօկ երկարութեամբ, 4—5՝ վերջօկ լայնութեամբ քառանկիւնի հաստ, ողորկ կաշի է, որ ունի քուրդ կինը՝ գրեա թէ ընդ միշտ կապած աջ ազգրիցն, թէշին դիւրաւ պտտեցնելու համար, որն և միաժամանակ գերծ է պահում հանդերձներն աղտոտուելուց և անտեղի մաշուելուց:

Եզդուհին շատ հմուտ է և գիտակ' և կաթնատնտես-

սութեան արուեստին, գովուած է նրանց պատրաստած համեղաճաշակ սերը, մածոնը, դայմազը, իւզը, պանիրը... մանաւանդ տկերում շօռի մէջ պահած պանիրն, սրի լաւն բարձր կարելի է համարել հոլանդական թանգազին պանիրների տեսակներից՝ իւզալիցն ախորժ համի պատճառաւ և առ հասարակ:

Սխալ է այն կարծիքը՝ թէ եզդիները մաքրասէր բնոյթ չունեն, ընդհակառակն՝ նրանք՝ համեմատաբար վերին աստիճանի սիրահար են մաքրակենցաղութեան՝ չ'նայած գեանախշտիկ, վրանաբնակ, վայրագ կացութիւններին, նրանց սիրելի պահանջն է թամզութիւն (մաքրութիւն):

Տան տիկինը՝ ամեն շաբաթ անարգել լուացքի դուրս գալու սովորութիւն ունի՝ տան մէջ եղած բոլոր կին, աղջիկ անդամներով, նրանք իրենց լուացքը սիրում են կատարել գիւղից դուրս՝ բացօթեայ՝ գետի, առուակի կամ աղբիւրների եզերքներում, ուր թէ կիսամերկ մարմնով շորերն են լուանում և իրենք են լուացում առանց խոյս տալու պատահական անցորդների գիպուածական ներկայութիւնից:

Սապոնի փոխանակ սրանք սովորաբար գործ են դրնում չոզան և գիլ: Զորերը լուանում են չոզանով, երբ ջուրը սկսում է եռ. գալ՝ պղնձի մէջ լցնում են սրոշ քանակութեամբ չորացրած չոզան, և այդ չոզանովն եփուած ջրով սկսում են լուանալ շորերն, (Չոզանը՝ ասեղնատերև բոյս է, որ ունի սապոնի յատկութիւն և շատ առատութեամբ բուսնում է մեր լեռներում, որը և մեծ քանակութեամբ հաւաքելով չորացնում են պահում). իսկ անձերը՝ մանաւանդ գլուխները՝ լուանում են գլով. (Գիլն՝ շիկագոյն բազազրութեամբ կրային կոշտ բազազրութիւն է և ունի յատկութիւն մի քանի ժամուայ ընթացքում հողակոշտի պէս խմխելու տաք ջրում, և ահա՛ այն խմխեցրած կրային տիղմ գանդուածով լուանում են գլուխներն):

Գիլն՝ ոտպոնից անհամեմատ՝ փափուկ է պահում անձն՝

մանաւանդ մագերէն, ըստ որում մեր կանայք ևս վաղուց հետէ սովորութիւն են դարձրել գլուխների գլով լուանալն:

Եզդի տիկինն չ'զիտէ և չէ սիրում քաշուել մարդկանցից, որպէս և չի քաշուում բացակուրծ ստիւնքներով երեսային կերակրելուց՝ բազմութեան ներկայութիւնից, ուր էլ և ինչպիսի հասարակութեան մէջ էլ լինելու լինի՝ նորա համար միևնոյն է:

Օրորոցի գործածութիւնը խորթ է նրանց համար, որովհետև սովոր են անկաշկանդ մեծացնելու իրենց մանուկներին ազատ գետնի վերայ՝ շատ պարզ և տարրական խնամածութեամբ. իսկ մի տեղից մի այլ տեղ փոխադրուելու ժամանակ՝ երեխաներին լցնում են բռնների մէջ և ձգում գրաստների վերայ՝ ինչպէս զառներ, և երբեմն էլ զառների հետ միասին:

Ատելի է նրանց յոյժ փափկասիրութիւնը՝ մանաւանդ՝ յանձին երեխայոց խնամածութեան և պահպանութեան:

Եզդի մօր ծննդաբերութեան երկունքը ընդ միշտ առանց մանկաբարձի օգնութեան է կատարում, և ըստ մեծի մասին տեղի է ունենում բացօդեայ՝ գուրսը՝ սարերում, ձորերում..., այդ միևնոյն է՝ նրանց համար, մէկ էլ յանկարծ կ'տեսնէք ահաւասիկ ծննդական մայրը՝ փէշերով պարուրած իւր նորածին երեխին՝ գրկում բռնած տուն է վերադառնում:

Եզդիների միմեանց ընծայած փոխադարձ վստահութիւնը նախանձելի է, մէկը միւսի հետ՝ մէկ երկու անգամ աղ ու հաց կտրելուց յետոյ՝ արդէն մտերմանում և բարեկամանում է փոխադարձն վստահութեան կատարեալ հաւատով:

Մուրհակի գործածութիւնը՝ գրեթէ գոյութիւն չունի. մուրհակի փոխանակ ծառայում է փոխադրած ազնիւ խօսքը, մուրհակը համարում է ապացոյց անվստահութեան: Թէ մեծ և թէ փոքր քանակով՝ տուած փողերի համար բնաւ ամենեին՝ վաշխ-տոկոս՝ վերցնելու սովորութիւն չունին:

Պարտապաններից՝ տոկոս, վաշխ վերցնելն համարում է մեղք և ծանր յանցանք...: «Եւ այս արեւից յետոյ՝ դէտ ֆաշաֆակրքուած, աւեսարանակաւ հաւարուած ֆրիսունեաւ հաւարանակաւ է ֆուրդիւ սուգոք, սևհարս... սևուսնեքո. իսկ ինիք գործնակաւ հարս ունի՝ արդեօֆ... ոյ ապաֆէն՝ հարսֆ առակց գործոյ մեռեալ եւ. մի բաւ ձիջս է, որ մեկ ֆրիսունեաւերս՝ ընդհանրապէս օժտուած եւիֆ սեսակաւ եւ արուեսակաւ հարսույ. իսկ նրակի գործնակաւ եւ կեղտակի»:

Յոյժ սիրահար են բնութեան հրաշալիքին՝ և առ հասարակ գեղարուեստին. սիրում են շատ՝ բլուլի (սրնգի) գործածութիւն, պար, երգ..., քրդական երգերն մեծաւ մասամբ մեյամաղձոտ են և տխուր:

Խաշնարածները հովում և առաջնորդում են իրենց խաշները սովորաբար սրնգի ձայնով, և հովուի նշանացի բացականչութիւններով և սուլումներով:

Եզդուն յոյժ սիրելի է գէնքի գործադրութիւնը և նրա խնամքով պահպանութիւնը, գէնքը նորա անբաժան ընկերն է և մէկն մարմնի գլխաւոր անդամներից:

Տակաւին կենդանի է նոցանում վահանի, տէգ-նիզակի... գործածութիւնը, և մասնաւորի սիրելի է անտիքա գէնքերի յարգութիւնը, որպէս հայրենի յիշատակութեան փառքի նուիրական հնութիւնների, որով նա դեռ այսօր էլ պահել է և պահպանում է իւր ազգայնական անվեհեր և անընկճելի հպարտ հոգին:

Սիրել է, և սովոր է իւր շրջապատ ազգերի վերայ ոլիմպիական բարձրութիւնից նայելու, ճիշտ ինչպէս՝ մշակի, ստրուկի... վերայ, որոնց և անուանում է «ֆլայի», որ նշանակում է՝ ոչ այլ ինչ՝ եթէ ոչ՝ Փահլայ, մշակ, ստրուկ, բանուր...:

Պէտք է նկատած, որ կուրմանժն ի բնէ իսկ հպարտ է ծնուած, նրանց ամեն մի քայլափոխի, շարժուածքի,

խօսակցութեան մէջ երևում է հպարտութեան հոգի:

Բնականից՝ վերին աստիճանի ուշիմ և սրամիտ են, մանաւանդ հաշուարարականի մէջ, շունենալով զաղափար անգամ՝ թուաբանական արուեստի, որպէս և համընդհանր գործածութեան՝ բայց և այնպէս շատ յաջողութեամբ և արագ հաշուում են տասնեակ հազարաւոր թուեր, աւելի յաջող քան թուաբանագէտն, հարկաւ նորա ցարդ գործ չեն ունեցել միլիոնաւոր մեծաբանակ թուերի հետ:

Կարի՝ խիստ անողոր են դէպի իրենց անհաշտ ոխերիմ թշնամիները, սիրում են արեան վրէժը արիւնով լուծուած տեսնել, սակայն և միաժամանակ անսահման ներողամիտ են դէպի իսկապէս զղջացածները, բաւական է՝ երբ մէկի-միւսի հակառակորդը ցանկութիւն յայտնեց իրենց օջախը դիմելու և հաշտութեան ձեռք մեկնելու, այդպիսի խորհրդաւոր ըօպէներում պատրաստ են վեհանձնաբար մոռանալու տխուր անցեալն, և մինչ իսկ գրրկալիք փարուամներով, արտասուագին աչքերով ընդունելու զզջացած-ստրջացած թշնամուն՝ և սիրելու ներողամտական իսկական սիրով:

Սրանց մէջ յաճախ գործածական է արեան գնահատութեան սովորութիւնը, որ տեղի է ունենում միջնորդ դատարանով՝ հարկաւ երբ դիմացիներն դժուար է թւում զիջանելն և ներողութիւն խնդրելն:

Խորշելով խորշում են պետական դատարաններ զիմելուց և սիրում են առհասարակ միջնորդ դատարաններով վարելու և ուզելու իրանց բոլոր գործերը, միայն բարդ խնդիրներում զիմում են ցեղապետին. նա դարձեալ առանց խորհրդի չէ անում և ոչինչ:

Ռուսաբնակ եզդիների ներկայ ցեղապետն համարում է Ռուսուպ Բէկ Թեմուրեանցն, սա իւր տարրական կրթութիւնը ստացել է ս էջմիածնի ճեմարանում՝ իւր լուսամիտ հայր Հասան աղի ջանքերով, հանդուցեալը ի սրտէ

փափագում էր մի օր տեսնել իր կուրմանժ ժողովրդի սեփական գրերի գիւտն և նրանց գործադրութիւնը:

Ընդհանուր եզդիների ներկայիս կրօնապետն է՝— շեխ-միր Իսմայիլ—Միր-Աբդին Բէկօղլին, որն ապրում է Մուսուլի և Բաղդադի մօտերը: Սա անցեալ 1909 թւին՝ Յունուարի 30-ին գալով Կովկաս մի քանի օրով մնաց ս. էջմիածնում՝ այցելելով սրբազան վայրերն հայութեան:

Կրօնապետ Միր Աբդին՝ իր հօտի ընդհանուր այցելութեան ժամանակ՝ գնահատելով ցեղապետ—էլբէկի՝ յիշատակեալ Ռուսուպ աղի ծառայութիւնները և անձնական արժանաւարութիւնը՝ նշանակեց նրան իրեն փոխանորդ և ներկայացուցիչ իւր ռուսահպատակ հաւատացեալների վերայ, ապա գալով Տփլիս՝ բաղդ ունեցաւ ներկայանալու Ն. Կ. Մ. փոխարքայ Գրաֆ Վարանցով Գաշկովին:

Եզդիներն ամենուրեք ընդունում և համարում են հայերին իրենց ցաւերի կարեկից ընկեր և բարեկամ, սիրով յաճախում են հայ եկեղեցիներ և ուխտատեղեր՝ մատաղներով, խունկերով, մոմերով, մատաղում, ուխտում են ամենայն ջերմեռանդ հաւատով և աղօթքներով. միայն շատ խորշում են երեսները խաչակներուց:

Սուրբ Սարգսի պասին՝ այն է առաջաւորաց պահոց օրերում՝ հայերիս հետ երեք օր միայն՝ ծոմ և պահք են պահում, և բոլոր սուրբերից աւելի քան յարգանքով են վերաբերում ս. Սարգսին:

Եզդիները՝ շատ աննշան բացառութեամբ՝ զրեւ թէ ամենքն էլ խօսում են հայերէն՝ բաւականին ազատ և համարձակ:

Եզդին՝ ի բնէ ընդունակ չէ եղել և չէ՝ հողագործութեան, հետեաբար և երկրագործութիւնը՝ երկրորդական տեղ է բռնում նրանցում, նուիրուած են խաշնարածութեան, օրսորդութեան, և գլխաւորապէս ոստայնանկութեան:

Հաստատամտութիւնը՝ եզդու ինքնահամոզման մէջ



ծայրայեղութեան է հասած, եթէ չասեմ յամառութեան, և այդ իսկ պատճառաւ անայողողոյ հն, երկիւղ ասած բանը՝ նսրանց համար գոյութիւն չունի, մահը աւելի շուտ են ընտրում քան երկիւղը, մանուկն անգամ արհամարհանքով և սառնասրտութեամբ է վերաբերում թշնամու հարուածին՝ առանց մի երկչոտութեան ստոր ցոյցի: Թէ մարդ թէ կին՝ փոքրութիւնից վարժուած են զէնքի յաջող գործադրութեան:

Համոզմունքի զէմ գնալն փոքրագութիւն է համարում. և այդ յայտնի է ամենքին. հայերը, թէ պարսիկները՝ մէկի յամառութեան չափը ցոյց տալու համար՝ ասում են «*ֆրդի կոդ ունի*» — որ նշանակում է՝ վերին աստիճանի յասառ, կամակոր ոք է:

Առակ է դառել և եզրու ընածին՝ ոխակալ ընոյթն, որն արտայայտում է՝ նրա՝ «*հրա դիւ բասակ*»-ովն՝ (դեռ դու սպասի), և որը՝ ևս մի ինքնուրոյն սարսափ է թողել շրջակայ ազգերի վերայ՝ «*քրդի հետ երբէք ոխակալ չմտալու*: Թէ հայը, թէ պարսիկը... սովոր են միշտ կրկնելու՝ «*Ասուած մարդի՝ ֆրդի բասակ-բասակից հետու պահի*», ասն թէ որքան խոր տպաւորութիւն է թողել քրդերի երկիւղն ընդհանրապէս:

«*Մրակց դարաւակալ ոխակալութեան օրինակը՝ մեկ կսակց դիւցազն Մրաւազդի արկածայիւր պատմութեան մէջ, ժողովրդական իրական աւանդութիւնների միակգանալն նոր տեսակի յասարակութեանը*»:

Մի առանձին խնամքով խնամում և պահում են նժոյգ ձիեր (քրդական ժրագլուխ հաս քէհլաններ՝ —, ճիշտ ըստ անգլիական աւանդական սովորութեան, թերևս և նորանցից աւելի քան վաղ: Ըստ որում՝ տեղական յաջորդականութեան շնորհիւ պահում է նժոյգների ցեղագրութիւնը, և զարմանալի է, որ ազնիւ ձիերի վկայագրների տեղականութիւնը՝ ամենախիստ կերպով պահուել է և պահում է:

Վաճառելու և գնելու դէպքում տրւում է պատճէն վկայականի, այն ևս ոչ մի, այլ մի քանի հայ, թուրք յայտնի գրագէտ քէթխուղանների, տանուաէրների վաւերական ստորագրութեամբ և որպէս էլբակու կնքով: Հատ քէհլանները ունին մի քանի հարիւր տարուայ ցեղական ստոյգ պատմութիւն իրենց ծագման:

Որձ նժոյգին վկայական լինելուն, չ'լինելուն՝ այնքան էլ նշանակութիւն չեն տալիս, իսկ մատիանին (էգին) անշափ:

Վաճառուած մատիանի առաջին քուռակն վաճառողինն է, և միայն քուռակի ստանալու դէպքում տրւում է վկայականի պատճէնը վաճառուածի:

Առանց վկայականի՝ եթէ ձին՝ հրեղէն անգամ լինի, նոցանում ոչ մի նշանակութիւն չունի: Սոյն եղանակաւ յաջորդաբար շարունակել է և շարունակում է ազնիւ նժոյգների դարևոր ցեղագրութիւնը սերունդէ սերունդ:

Հանդիսաւոր օրերում, որպէս և ձիարշանների ժամանակ՝ հատ քէհլանների լանջապարանոցից կախում են իւրաքանչիւրի «*թուղթն*» — վկայականն, որ խնամքով կարուած է լինում եռանկիւնաձև կանաչ սաղրէ կաշու մէջ, որ ունի կենդրոնում աչքաուլուն՝ երբեմն սակեպատ կամ արծաթապատ շրջանակով, կամ ծմբաուլունք:

Քէհլան ցեղի ձիերն՝ ինքն ըստ ինքեան՝ ակն յայտնի կերպով տարբերում են սովորական ձիերիցն՝ իրենց ինքնուրոյն, ազնիւ և համաչափ մարմնակազմութեամբ:

Իսկական նժոյգների գլխաւոր յատկութիւններն են՝ — «*Գլխի գեղեցկակազմ փոփոքիւնը՝ իրն փոփիկ եւ սուր ակակցներովն՝ կեկդակի եւ փայլուն ալեկովն, կարակնաձեւ՝ ոչ ալեկափ երկաշն պարակոցն*» — իրն կարճ եւ փոփ նուրբ բաշով, ունին սագակնակ կուրծք, բարակ արունկներ՝ — սուր եւ կոշոր սեւագոյն ակակցներով, պոչի մասիկն մասը կազմուած է յիկում՝ ոչ աւելի քան երեք վերջիկ, կարճ, նուր մագերով, ֆեհլակնի պոչիկ (բուրդե)

գառակն առ հասարակ բարակակիսն բարձր է շինու  
թաւրածեա մեջֆիցն....:

Կուրմանժը իսկական հատ քէչլանին՝ իսկապէս ոչ թէ  
սիրում է, այլ ուղղակի պաշտում է, նա նորա գրեա թէ  
երկրող Աստուածն է:

Կուրմանժը սովոր է կիսաբաց կրծքով շրջելու տա-  
րուայ բոլոր եղանակներում, նոյնիսկ ամենախիստ ցրտե-  
րում, ամենքն՝ և առհասարակ թխամորթ են. կին՝ թէ մարդ՝  
ունին վայելչահասակ, առողջ կազմուածք. կանայք օժտուած  
են գեղեցիկ աչք ու ունքով, և կարմրալար շրթունքներով.  
Իսկ տղամարդիկ՝ մեծ-մեծ քթերով և հսկայական ուժով:  
Եզդիներն համեմատաբար երկարակեայ են և յաղթան-  
դամ և խօրդ (հուժկու):

Եզդու կերածը սաջի հաց է, իսկ աղիդ կերա-  
կուրը—սաջ-դաւուրմասի՝—սաջի մէջ մանրիկ կտորնե-  
րով տապակած որսի կամ դառան միսն, և քիւլլամայ  
խորովածն՝ (վառ մօխրի տակ խորովուելու համար թաղած  
խորոված-միսը): Իսկ բուսականութեան մէջ՝ կանաչեղէնների  
կարգում՝ նրանց անգոյզ սիրելին է՝ սոխն, որին ոչնչի հետ  
չեն փոխի, և այն աստիճան, որ քրդի սոխասիրութիւնը,  
սոխայարգութիւնը՝ արդէն առակ է դառել ընդհանրապէս՝  
իրենց քրդական բարբառովն իսկ:—

—«Ազ պիվագ նա բիսու, բեժա շաբար բիսու».—

(Ես սոխ չեմ ուտում, ինձ ասում է շաքար կեր)

Քրդական նահապետական սեղանների զարդը համարեա  
թէ սոխն է, որ մեծամեծ գլուխներով դրուած է լինելու  
խոնչի (սեղանի) կենդրոնում և շատ անգամ դանակով  
չճեղքուած—չկտրուած, որպէս զի իւրաքանչիւր ուտողն՝  
ինքը ջախջախէ իւր բունցքի հարուածովն, արդարև դօմ-  
բով ջախջախած սոխը՝ կորցնում է կծութեան յատկու-  
թիւնն և աւելի ախորժելի է, մինչդեռ դանակով կտրածն՝  
իսկապէս մուռ (կծու):

IV.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ՝ ԵԶԴԻՆԵՐԻ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԲԺՉԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

Եզդին քաջ հմուտ է վիրաբուժութեան՝ նամանաւանդ  
անկամահատութեան արուեստին, անծանօթ չեն նորան  
և ներքին հիւանդութիւններ՝ իրենց յառաջացած պատ-  
ճառներովն հանդերձ, նրանց շատ լաւ ծանօթ են բժշկա-  
կան արմատներն, բոյսերն, ծաղիկներն՝ իրենց բոլոր ման-  
րամասն առանձնայատկութիւններով, անուններով, որպէս  
և պատրաստութեան և գործադրութեան եղանակով, հար-  
կաւ ըստ վաղեմի նահապետական սովորութեան:

ձարպիկ յաջողութեամբ արագապէս բժշկում են պա-  
տահած ոսկրային ջարդուածքներ և խախտումներ՝ թէ  
մարդկանց և թէ անասունների՝ առանց մի ծանր շարձա-  
րանք պատճառելու հիւանդացածներին:

Ոսկրային ջարդուածքներ ունեցող հիւանդներին՝ հրա-  
մայում են ուտեցնել գլխաւորապէս սևատաւարի գնգերից  
և պճեղներից պատրաստուած սննդաբար խաշ, որն հրա-  
շալի կերպով օգնում է հիւանդին և կազդուրում:

«Ձատ պարզ է՝ խաշի այդքան օգտակար լինելն՝ ոս-  
կրային հիւանդութիւններին, հարկաւ իւրն սոսնձային հիւ-  
թի պատճառաւ»:

Ամբողջ մարմնով ջախջախուածներին փաթաթում են  
նորամորթ արջի կամ գայլի կաշու մէջ, կամ յատկապէս  
նոր մորթուած սև ոչխարի տաք մորթում՝ նորանց դեռ  
բնական ջերմութեան մէջ եղած ժամանակ:

Երբ բժշկներին անհրաժեշտ է բժշկական փորձաու-  
նութիւն՝ որ և է կենդանու հիւանդութիւնն հասկանալու կամ  
տարիքն իմանալու, փորձաուու եզդուն բաւական է մի  
թեթև հայեացք, կամ մի փոքր շօշափելն՝ նորա համար  
արդէն պարզ է ամեն ինչ, նա որոշում է տարիքն կեն-

պանու ատամներիցն և պոզերիցն, իսկ հիւանդութիւնն աչքերից ու լեզուից և գլխաւորապէս յետոյքից:

Երբ ձիերի բուռակները դառնում են մի տարեկան, անդամահատելով հանում են նրանց քթածակերի մէջ եղած աւելորդ բլթակներն (մսաններն)՝ և անմիջապէս և եթ անդէն՝ յատկապէս՝ փռում կազմ պատրաստ պահած հրաշէկ երկաթովն խարանում են (զաղում են) բացուած վէրքի բերանը, որով վէրքն 3—4 օրից յետոյ արդէն բժշկուած է լինում կատարելապէս:

«Ջարմանալի է՝ որ բոլոր ասիական ազգերի մէջ՝ միմիայն եզդի քրդերին է յատուկ և յայտնի՝ ձիերի վերաբերեալ բժշկութեան սա օգտակար և գեղեցիկ արհեստն, ինչպէս՝ Եւրոպայում միմիայն անգլիացիներին, և ունի այն անփոխարինելի օգուտն, որով ձին ընդ միշտ փրկուած է լինում՝ արագ փախչելու ժամանակ՝ յանկարծական շնչասպառ լինելու վտանգից, որ գրեան թէ անխուսափելի երևոյթ է՝ արագավազ, վառ և աշխոյժաբնոյթ նժոյգ ձիերի համար»:

Բլթակները հանած ձիերն՝ ազատ և սնարգել շնչում են, որովհետև այսպիսի հանգամանքներում, որպէս և ծանրը աշխատութեան ժամանակ՝ ուռչում են ձիերի չհանուած բլթակներն և արգելում են շնչառութիւնն, և եթէ շնչասպառ էլ չեն դարձնում և վայրկենաբար մահացնում, բայց և այնպէս շնչարգելական անտանելի տանջանք են պատճառում խեղճ կենդանիներին:

Քանի-քանի հրաշալի թանգազին նժոյգներ՝ տեղն ու տեղն շնչասպառ են եղած և լինում են՝ բլթերի չհանուած բլթակների պատճառով:

Եզդուն սովորական է ընտանի որձ կենդանիների ներքինացնելն՝ թէ նրանց աւելի քան պիտանայու լինելու բեռնակրութեան և հերկագործութեան՝ և թէ շուտով և դիւրութեամբ պարարտանալուն, որպիսի գործողութիւնն

կատարում են՝ ամորձիգների՝ ձուանների դէպի փորի կողմը տանելովն: «Նախ՝ աչ ու ձախ շրջելով ոլորում են ձուաներն և պինդ տրորում, ապա սեղմելով դէպի ներս, փորի կողմն են քշում, և ամորձիգի դատարկ մնացած թաղանդն սեղմը ոլորելուց յետոյ՝ պինդ կապում են քիփ (մօտ) փորի տակից, այսպիսով մի շաբաթուայ ընթացքում կենդանին արդէն ներքինացած է լինում, ուստի և այնուհետև արձակում են ամորձիգի կապն: Միևնոյն կերպով վարում են հորթերի, խոյերի, նոխազների վերաբերեալ՝ նըրանց երկու տարեկան եղած ժամանակ, բայց ոչ ձիերի, եզների և գոմէշների, վերջիններին ներքինացնում են ձուանների պոկել հանելովն, և ինչպէս ասացիք, անմիջապէս խարանում են վէրքն, և առ առաւելն մի շաբաթ՝ և արդէն ներքինացած կենդանին՝ ոչ միայն բժշկուած է, այլ և միանգամայն դադարած, հանգարտած իւր երբեմնի կատաղութիւնից»:

Արագ բժշկում են «ծիժեռնակ» կոչուած փորացաւային հիւանդութիւնը կենդանիների, որպէս և «դաբաղն» բերանների և պճեղների:

Փորձառու եզդին թէ իւր աչքերի խորհրդաբար հայեցքներով և մի ինչ որ ներքին ազդեցութեամբ՝ գիտէ թովել-հրապուրել գազանացած կենդանուն՝ և այն աստիճան, որ նա ոչ միայն թողնում է իւր գազազած կատաղութիւնը, այլ և բոլորովին մեղմացած սկսում է մինչ իսկ լիզել իւր թովչի ձեռքերը:

Երբ յանկարծ սատկում է կովի հորթը, քածի (մատակի) ձագը, կամ ոչխարի գառն, և երբ նրանցից մէկն ու մէկն այլ ևս չի թոյնում իրան մօտենալու և կթելու, և կուրծի կթը բնականաբար ցամաքել է սկսում, այդպիսի հանգամանքներում շտապում են կանչելու կենդանիների մտերիմ ընկեր և բարեկամ գիտակ կուրմանժ եզդուն, որը մի ինչ որ եղանակով սկսում է ծւծուացնել,

սուլել՝ և վրդովուած կենդանուն հրապուրելով զիւթել և իւր մօտ բերել, երբ նա մօտենում է՝ եզգին սկսում է փաղաքշաբար փայփայել՝ թէ ձագամեռ վշտացած մօրը և թէ օտար ձագին, մէկ երկու ըոպէից յետոյ տիրում է երկուստեք սիրալիր մտերմութիւն՝ ինչպէս հարազատների մէջ, և այնուհետև տան տնտես տիկինը աներկիւղ մօտենալով կթել է սկսում:

Պախարդելով ձագամեռ կենդանիներին՝ սիրուեցնում են և իրենց սատակած ձագի կամ հորթիկի տիկ հանած կաշու վերայ՝ սրին երբեմն լցնում են յարդով, երբեմն ոչ:

(Ջարմանալի է, որ այս ամենի հետ՝ քուրդը շարաշար նախապաշարուած է մի բացառիկ նախապաշարումով.— մի շրջաբոլոր գիծ քաշի նրա շուրջը՝ նա կմեռնի և այն գլծից դուրս չի գայ, մինչև չ'զեղծուի գիծը):

V.

ՋՆԵՐԻ ԲԱՅԱՌԻԿ ԽՆԱՄԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՋԻԴԻ ԿՈՒՐՄԱՆԺ-ՆԵՐՈՒՄ:

Թէպէտ շունը ամենուրեք իւր առ մարդն ունեցած անհուն հաւատարմութեան և օգտակարութեան շնորհիւն՝ վայելում է խնամք և պահպանութիւն մարդկային սեռից, բայց չ'կարծեմ ոչ մի ազգի մէջ՝ շներն այնքան սրտացաւ սէր, գուրգուրանք և խնամք վայելեն, որքան կուրմանժ եզգիներում. նամանաւանդ արագավազ որսկան կիրթ բարակներն (թաղղի): Քուրդը շան վերայ նայում է, ինչպէս իւր եղբօր կամ որդու վերայ:

Ակներև է՝ որ որսորդութեան յաջողականութիւնը՝ գլխաւորապէս կախուած կայ և բարակներից, որոնք առ հասարակ շատ վարժ են որսորդութեան արհեստի մէջ, բրդերի ջանքերի և թէ իրենց սուր հոտառութեան և թեթեւացայտ ցատկումների շնորհիւ, հազիւ թէ երբ և իցէ ազատուի սրանց սուր հոտառութիւնից և թեթեւութիւնից ցայտումներից որ և է վայրի էրէ, այժեամ, եղնիկ, նապաստակ կամ որ և է մի կենդանի:

Չկայ մի եզգու տուն, որ չ'պահի մէկ, կամ մի քանի վարժ բարակներ, պէտք է ասած՝ որ այդպիսի բարակները ծախում են շատ թանգ գնով, համարեա՝ հատը մինչև 25 ըուրլի, որովհետև լաւ կրթուած են առհասարակ:

Բարակներին ձմեռնեց հազցնում են՝ նրանց համար յատկապէս գործած — պատրաստած բրդեայ կարճ և թեթեւ յարմար բաճկոններ, ձմեռնեց գիշերում են տների մէջ:

Բարակների վզով անցնում են երկաթեայ թեթեւ մանակներ, որոնք ունին դրսի երեսից սուր բևեռներ գայլերից պաշտպանուելու համար:

Բարակներից ոչ պակաս՝ նրանք սիրում են և խնամում հովուական գէլխեղզ (գալլերին խեղզող) գամփռ մեծ մեծ

շներին, որպիսիք ընդունակ են ոչ միայն հօտերը պահպանելու աւագակներին և գիշատող գայլերին, այլ և բազմիցս զգզում են և պատառում ահագին արջեր—իսկ, իրենց աջակցող խաշնարած անձնագոհ հովիւների օգնութեամբ, որոնք գազանի շների հետ խառնուած օրհասական տաք կռուի ժամանակ ամենայն ճարպիկութեամբ յետևի կողմից յարձակուելով յաջողացնում են բռնելու արջի կամ որ և է կռուող գազանի ամորձիգներից, իսկ եթէ էգ է՝ կուրծից, որով գազանն միանգամայն թուլանում է և դիւրաւ ենթարկում է խեղդող շների և աներկիւղ խիզախ հովիւների կատաղի յարձակման, և այդպիսով՝ քանի քանիցս՝ ողջ—ողջ որսալ կարողացել են և որսում են անգամ ահագին մեծութեան վիթխարի արջ... այժմ երբ հրացանի գործածութիւնը սովորական է դառել, այդպիսի դիպումները՝ հազուադիւտ են:

Եզդին խիզախ որսորդութեան՝ որպէս մենամարտութեան և կռուի մէջ հազիւ թէ իւր հաւասարն ունենայ աշխարհում:—

Որսում են առատօրէն վայրի—երէ ցիւռ անգամ, եղնիկ, արջ, աղուէս, նապաստակ, ճագար և ինչ որ պատահի, այդ միևնոյն է, չի կարող թաքնուիլ կամ ազատուիլ սարի որսկան քաջ զաւակների կոպալներից\*), որպէս և նրանց պատրաստական որսորդ շներից, որոնց ական թօթափել՝ օգնութեան են հասնում հովուական արթուն պահպան զալմ գամբուններն:

(\* Վարս՝ կօպալէ, հատա ջակնարէ.—«սուր կօպալի (մահակ) առաջ՝ իշի արխարաթիւն» սևա՝ ևրակց ֆադաֆսկանուրթիւնը՝ կոպալի (ոյժի) մասին:

VI.

ԵԶԻԴԻ ԿՈՒՐՄԱՆԺՆԵՐԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Որքան ուրախալին է, որ ձիգ տարիների խաշնարածական չուառ կացութիւնը իւրն աստանդականութեան արկածներով չէ անհետացրել եզդիների նախնի պատերազմական հոգին, կորովը և ինչ-ինչ բարեմասնութիւնները:

Մի պատմական ժողովուրդ, որ քաղաքական ձախողակի հանգամանքների շնորհիւ հակառակ իւր բուռն ձգտման՝ ցայսօր իսպառ զուրկ է ոչ միայն տիրող կուլտուրայից և կրթութիւնից, այլ և զուրկ և թափուր դոյն իսկ սոսկ զրչից ու զրից. և չար բաղդի ճակատագրով տարածուած՝ ընկած է մնացել խուլ լեռնաշղթաների քարանձաւների մէջ և նրանց ծերպերի վերայ, ապաւինած միայն իրենց որսորդութեան, խաշնարածութեան և ձեռագործական արուեստին՝ պահելով հանդերձ իր ազգային լիզուն և ինքնուրոյն կրօնը:

Եւ երբ մտայոյզն խոկումներով՝ յանձին սրանց թշուառութեան՝ և անկարեկիցն վերաբերման ապերախտ մարդկութեան և նրանց աններհիլի սառնասրտութեան՝ վերջ տալ էի կամենում դոյզն նկարագրիս՝ յանկարծ մի անակնունելի ուրախութեամբ՝ ի դէպ կարդում եմ օրուայ փոստայով եկած թերթերից մէկում («Մշակ» 1910 համար 4)՝ Պահլաւունի Տիկին Սաթենիկի յօդուածն Իգդիրից, որով շտապում է յայտնելու Ղուեղացիների արդէն գործնականապէս երկնած մարդասիրական դիտաւորութեան մասին՝ յանձին եզդիների:—

Նա ուրախացած գրում է՝ թէ արդէն Ղուեղիայից ուղարկուած է մի շուեղուէի՝ եզդի չուառ երեխայոց համար որբանոց բանալու Իգդիրում, որը և արդէն նոյն հարցով դիմել է կառավարութեան, երկօրից յետոյ ի դէպ կարդում եմ «Կավկազ» պաշտօնակտն թերթի 8-րդ համա-

ըում նոյն Չուեղուհու արդէն բանակցութեան մէջ մտած լինելն՝ «Չուեղա-Եղղիական» որբանոցի դքսականապէս բացման համար՝ Երևանի տէր նահանգապետ Տիգենհաուզէնի հետ:

Զարմանալի չէ՛ արդեօք՝ Եւրոպայի ծայրագաւառի մի փոքրիկ պետութեան այդքան հեռուից մարդասիրաբարն կարեկցութեամբ հետաքրքրուելն մեծ ազգի հազարաւոր տարիներից ի վեր մոռացուած անբաղդ մնացորդներով՝ մինչդեռ անցեալ ձիգ դարերի ընթացքում՝ նրան աւելի մօտից ճանաչող և ինչ-ինչ առնչութիւն ունեցող ասիական մեծամեծ ազգութիւններն՝ իսպառ ապերախտ են գտնուել այդ չուառ՝ սակայն ուշագրաւ ժողովրդեան ընդհանրական բնոյթ կրող փառաւոր անցեալի՝ որպէս և նորա անփառունակ ներկայի վերաբերմամբ:

Ոչ պակաս մխիթարական է՝ և վերջերուս՝ մեր բարեխնամ հզօր պետութեան, Կովկասեան Ն. Կ. Մ. փոխարքայ կոմս Վարանցով Դաշկովի բարձրագոյն հաճութեամբ արդէն ձեռնարկումն Եղղիական տարրական անդրանիկ դպրոցի բացման՝ մերային երբեմնի յայտնի «Կամրջաձոր» կոչուած հոյակապ պատմական կիսաւերակ վանքի կրօնքանդ փլատակների շուրջը՝ քրդական «Զօր» լեռնային գիւղում, որ ունի սառնորակ սրանչելի աղբիւրներ և գովասուն կլիմա, և գտնուում է Մասիսից դէպի արևմուտք Բարդող լեռների ձորահովտում, և սահմանազուխ է իւր «Խաչի-գէտուկ»-ովն Ռուսաց և Տաճկաց, ուր և քիչ հեռու ընկած է Կունդ Արամազդի մեհենատեղին (տես «Հովիւ» 1907 № 36):

Բայց սակայն՝ այդ ամենը քիչ է նրանց անվերջ պահանջների հանդէպ, անհրաժեշտ է նախ ի մօտոյ մանրագնինն ուսումնասիրումն նրանց ինքնուրոյն գեղեցիկ և ճոխ լեզուի, ձեռագործային արհեստին, անօրինակ բացառիկ գաւառանքին, նախնական սովորութեանց, կարգերին,

կաթնատնտեսութեան, բժշկականութեան, կենդանիների ուշագրաւ խնամածութեան..., որպիսիք կուսական բացառիկ, անշեղ տեսականութեան մէջ հասել են ցայսօր՝ նախապատմական դարերից սկսած, որն և թերևս հանդիսանալու է մի լուրջ խնդիր՝ ներկայ կուլտուրայի և գիտութեան համար, և անշուշտ յոյժ օգտակար՝ իւրաքանչիւրն՝ իւրն տեսակի վերանորոգուած — յառաջադիմած գիտութեան և պրօֆէսիօնալն արուեստին: Եւ ո՞վ պիտի հրաւիրէ ընդհանուրի ուշագրութիւնն այն ամենի վերայ, եթէ ոչ անյիշաչար գրիչը և իւր կոչման նուիրուած լրագրութիւնը:

Իսկ ո՞վ, և երբ պիտի մասձէ և իրագործէ սեփական գիր և գրիչ, և քաղաքականութիւն պարգեւլու այդ վիշապազուն ցեղին, որ ի բնէ օժտուած է ինքնուրոյն բացառիկ յատկութիւններով. չը գիտեմ...:

Կուրմանժ եղղիների վերաբերեալ՝ դեռ ի դէպ հարկ կլինի մեզ խօսելու Սաթենիկի, Արտաշէսի, դիւցազն խոհական Արտաւազդի, վառշուերն Արգաւանայ և չքնաղ Մանգուի..., ցարդ անուշաղբութիւնից խուսափած արկածալիւր պատմութիւնների վիպային նշանակալից էջերուս, որպիսիք կարծեմ ոչ ուշ լոյս աշխարհ գալով՝ հանդիսանալու են բեմական փառարանուած պատկերների գեղարուեստական փառքն իրենց խորհրդաւորութեան շնորհիւ:

VII

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՎԻՉԱՊԱՋՈՒՆ ՄԱՐ ՑԵՂԱՆՈՒԱՆ:

Մար՝ միջազգային լեզուով՝ թէ քրդերէն, թէ պարսկերէն և թէ հայերէն՝ նշանակում է օձ. իսկ «Չահ-Մար» — թագաւոր օձ, շահ-օձ, մինչև այսօր էլ մեր արարատեան բնիկներին մայրերը՝ իրենց ստահակ երեխաներին անիծելիս՝ ասում են «շահ-մարը բեզ կծի... շահմարի տուած. . . Չար, անհնազանդ, լեզուանի հարսներին՝ կեսուրները «շահ-մար» են կանչում, կամ «շահ-մարի ձագ, — շահ-մարի ջինս»: — Քե տեսնեմ բալբիս, շահ-մարը լեզուդ կծի, պապանձի էդ շահմար լեզուդ. աչքերը-աչքերը՝ կարծես շահմարի աչքեր լինի՝ շան աղջկայ աչքերը...»

Ակներև է՝ որ մար՝ ազգանունը ի վաղուց անտի՝ նախապատմական դարերից սկսած յատկացուած է վիշապազուն քուրդերին՝ շրջակայ եղած հնագոյն ազգերից՝ նրանց նենգամիտ՝ ռխակալ բնածին վրիժառու բնոյթի աղագաւ, որով և ի դէպ կոչուել են՝ — վիշապազուններ — այն է՝ վիշապներից սերուածներ. եթէ ուրիշ ոչ մի ապացուցութիւն չ'իմենք, — վիշապազուն՝ — վիշապազունք՝ սովորական դարձած կոչնանունն միայն բաւական էր՝ որպէս խօսուն ապացուցութիւն վերոյգրեալներին՝ առ հասարակ, և ի մասնաւորի՝ ի խնդիր նրանց նենգաւոր բնաւորութեան և ցեղային ծագումի անուանական լուսաբանութեան:

Աժդահակ՝ կամ Աշտահակ՝ նոյնպէս ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ դարձեալ «օձ». բայց ոչ հասարակ, այլ մեծ վիթխարի՝ ազնաւոր, վիշապ-օձ՝ աժդահա օձ, որպէս և դարեր առաջ նոյնը վկայել է յայտնապէս և ինքը մեր պատմահայր Խորենացին — նա անաւանիկ —

«Չի աշդահակ ի մեր յեզու է վիշապ»

Խորենացի Գ. Ա. Է. Լ.

Որքան հետաքրքրական և զարմնալի է, որ և այսօր իսկ՝ Արարատեան աշխարհի բուն բնիկներին շրջանում՝ Խորենացու յիշատակած Աշդահակն — իւր նոյն իմաստ, նոյնհնչիւն կիրառութեան մէջ է՝ մեծի, վիթխարու, աժդահայի, հսկայի, ազնաւորի՝ իսկական և բուն նշանակութեամբ, որը գալիս է վերակենդանացնելու մի քանի տասնեակ դարերի յիշատակը:

VIII

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԱՑ «ՆԱԽՋԱՒԱՆ-ՆԱԽՃԱՒԱՆ» ՔԱՂԱՔԻ:

Մեծին Տիգրանի՝ 565 թուականի նախ քան Քրիստոս՝ Մարաստանից դերի բերուած մեծ գաղթականութիւնը վերաբնակուելով Մասիսից մինչև Գողթն՝ հիմնում են նախճաւանը-նախջաւանը՝ ներկայիս Հին-Նախիջևանը: (Հին քաղաքի փլատակները տարածուած են քաղաքի հարակային կողմում):

Նախճաւանի կամ նախջաւանի արմատն է՝ — «Ճաւան կամ Ջաւան», որ զուտ քրդական բառ է և ունի բազմազան, հոմանիշ նշանակութիւն՝ — աչքի՝ դրախտի, գեղեցկութեան, հրաշալիքի իմաստով, որպիսի անունն վիշապազունները շատ ի դէպ ընծայել են իրենց գաղթականութեան գեղեցկագիր՝ Արաքսի ափից ոչ հեռու դարեանդ մայրաքաղաքին, որն և կազմում է քաղաքանուան արժատն, իսկ «նախ» մակդիրն, որ և գործադրում է՝ միաժամանակ և «հախ»՝ նշանակում է՝ «ձիշտ, արդար», ըստ որում՝ նախճաւան կամ նախջաւան՝ նշանակում է՝ արդարև դրախտ, արդարև ակն (աչք), արդարև գեղեցկութիւն:

Եւ իսկապէս՝ ո՞վ մօտից հետաքրքրուել է նախիջևանի գեղարուեստական բարձրաւանդակ տեղադրութեամբ, նրա գեղանկար դար դարաստաններով, նրա աղբերաշատ՝ զմայլելի վայրերով, դրախտանման բուրաստան ծաղկոցներով, զուարճ այգիներով, մեղրահամ, լուսերանգ խաղողներով, դուստմաններով, և ուրիշ շատ ազգի-ազգի սքանչելի համադամ բերքերով և պտուղներով, երկնուղէշ սօսիներով, բարտիներով, անուշաբոյր վարդենիներով, բազմազան ծաղիկներով... կարողարացնէ մար վիշապազուններից՝ իրենց կենդրոնա-գաղթավայրին յատկացրած համապատշաճ անունն քաղցրիկ:

Նշանակալից է՝ որ ուղղակի ոչ այլ ինչ մի, բայց

միայն Նախճաւան-Նախջաւան անունով է արձանագրուած և մերային հնագոյն բոլոր յայտնի, անյայտ մատենագրութեան, — Փ. Բիւզանդից, Ղ. Փարպեցուց, Սեբէոսից, Թովմա Արծրունուց, Յովհաննէս կաթողիկոսից, Մովսէս Կաղանկատուացուց — որպէս և Խորենացուց: Եւ առ հասարակ մեր մատենագիրներէից՝ և ոչ մէկն, և ոչ երբէք չի գործ դրել կամ արձանագրել՝ վերջերումս մակերևոյթաբար յերկրած՝ — «Նախիջևան» թխովի անունն, որպիսին է միայն զուտ արգասիք՝ անմիտ ծակ ազգասիրութեան՝ և ոչ այլ ինչ: Նախիջևան՝ ազգասիրաբար ազգայնացրած անուան ծագման պատմութիւնը՝ այնքան էլ հին չէ, հազիւ 150—200 տարուայ, թէ է ակընյայտ թիւրիմացութեան արգիւնը, այդ փաստ է:

Այնտեղ կայ մի ինչ որ հեթանոսական՝ աւելի շուտ արաբական ցածիկ դամբարան՝ որ միայն հայերից Նոյեան տապան է կոչուում, հարկաւ և այդ ունի իւր աւընչութիւնն քաղաքի անուան դիտաւորեալ փոփոխման խնդրում:

Աներկբայ է, որ Նախջաւանը՝ — Նախիջևան գարձնողների ցանկութիւնն է եղել՝ և միաժամանակ կապելու այդ անունն Նոյի անուան և գալստեան հետ, որպէս Նոյի իջման՝ նախ-անդրանիկ վայրն, մինչդեռ Նախիջևանն երկու օրուայ ճանապարհով հեռու է Մասիսից, և Արաքսի միւս ափումն ընկած՝ ուր և Մասիսից ընտանիքով և աղխով գաղթելու համար պէտք էր առնուազն 4—5 օր, եթէ շասեմ շաբաթներ, հեռեաբար՝ սոփեստական մի բառախաղութիւն է, և ոչ այլ ինչ:

Մտէք և բուն ժողովրդի մէջ, և գուք ոչ մէկի բերանից չէք լսի «Նախիջևան» այլ միշտ ընդհանուր մատնագրութեանից գործ զրուած «Նախճաւանը» իւրն իսկութեամբ, իսկ Նախիջևանը՝ գլխաւորապէս մեր վարժապետներից և մեր հոգևոր ատենաներից, որոնցից և բղխել է:

XI.

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Որովհետև մեր այսօրուայ դրացի և բարեացակամ կուրմանժ եզդիներն՝ որոնց մասին խոնարհ աշխատասիրութեանս սկզբում յիշատակեցինք՝ համարում են և են շառաւիղ մեր երբեմնի հօր դաշնակից մարաց Աժդահակեան վիշապագունների, որոնց նախածնողներին՝ Մեծն Տիգրանը Քրիստոսի ծննդից առաջ (565 թ.) գերի առնելով՝ իրենց տիկնանց տիկին Անոյշ մեծ թագուհով՝ փոխադրեց Հայաստան, և այն նախանձելի օրերի համար է, որ անմահ Խորենացին հայրենասիրական վառ սիրով լցուած՝ բացականչում է՝ — «Եւ սիրելի էր ինձ յայնժամ գալն Փրկչին և զիս զնել, և առ նորօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տեսութեամբն խրախճանալ» (Խ. Գ. Ա. գլ. ԻԲ):

Մեծն Տիգրանը՝ Աժդահակի սերնդին յատկացնում է գաղթավայր՝ սիգապանժ մեծ Մասիսն իր շրջապատով, ուսկից՝ հետզհետէ արձեւով բազմացան և տարածուեցին մինչև Գողթնեաց աշխարհը (Ագուլիս, Օրգուբատ), և իրենց կենդրոնավայրը ընտրեցին՝ Չարուրա ընդարձակ և արգաւանդ դաշտը՝ իսկ մայրաքաղաք՝ Նախճաւան, սրանց՝ օր քան զօր բարգաւաճման՝ ի դէպ արգելառիթ-խոչընդոտ հանդիսացաւ հանճարեղ և մեծ քաղաքագէտ նախանձայոյզն արին Արտաւագգ, որ իւր հեռանկատ տեսութեամբ վճռեց երկրի սիրտը մաքրել ցեց օտարներից և նրանց օր քան զօր սպառնացող հրատապ վտանգից, որը հիմնուելով այնժամեան ընդհանրացած, անպատուարեր բամբասանքների վերայ՝ առ այն թէ՛ մար Արգաւանը սիրային յարաբերութեան մէջ է իւր զշխոյ սայր Ալանուհի աշագեղ Սաթենկայ հետ, առ որ և ուխտեց՝ բառնալու այդ նախատինքը իւր հօր արքայական տանից, և գործին քաղաքացիական բարդ կերպարանք ընծայելով՝ զրեւ թէ



բնաջինջ արեց Արգաւանին, և Չարուրումն էլ շինեց իւր քաղաքն, իսկ յետոյ ինքն էլ զոհ գնաց՝ նրանց խարդաւանքին (անս «Հովիւ» №№ 13, 14, 15. 1909):

Իւր փառք Խորենացուն, որ այսօր զարթեցնում է մեր թմրութիւնը մերային անմեռ անցեալի պանծալի յիշատակներով, անս թէ ինչո՞ւ քաղցը թուեցաւ ինձ մի փոքր հին և նոր պտոյտ անելու՝ անգութ աշխարհից մոռացուած՝ ապաբաղդ վիշապագունների ճետերի շուրջը, որ ցարդ ապաւինած են լեռնային բաւիղների և ծերպերի փրկութեան:

(Լեզուիս և ուղղագրութեանս՝ մերային գրականական ոսկեղնիկ բարբառին փոքր ինչ մօտ լինելու համար՝ թող ներուի ինձ կրկնելու՝ յայտնի լեզուաբան և բանիբուն հայկաբան՝ աշխարհահռչակ Արհիեպիսկոպոս Այվազովսկու գիտական պատգամս՝—«Մեր աշխարհիկ աղքատիկ բարբառն՝ լեզու դարձնելու համար՝ իւր մայր, ճոխ գրաբարին մօտեցնելու է»: Բայց որովհետև հայի ապիրատ դէվիզն է՝ կուրօրէն կռիւ մղելն իւր նուիրական սրբութիւնների դէմ, ուստի նա այսօր էլ իւր վանդալական դուլ զանակն առած ասպարէզ է իջել՝ քերթող հանդիսանալու— Պարթեազուններով, Մեսրովբեան Ս. թարգմանիչներով, Չնորհալիներով, Բագրատունիներով, Էմիններով, Ալիշաններով, Դիւլօրիէներով, Մառերով, Վեսելովսկիներով... փառաբանուած վեհապանծ պերճ լեզուի և նրա որակուած, ձեռուած ու չափուած՝ հեշտալուր, դիւրմբունելի անազարտ ուղղագրութեան:

Վերջապէս՝ աշխարհումս՝ ո՞ր հին և նոր լեզուն է, որ գերծ է իւրն ինքնուրոյն բարգութեան խորհրդաւորութիւնից, որը՝ պարգևում է լեզուին մի առանձին քաղցրութիւն և հոգի, և ո՞ր դաւանանքն է, որ չէ ազգայնացրած...:)

Գրքոյիս՝ անձանօթ բառերի լեապատում բացատրութիւնը՝ տրուած է Արաբասեան՝ համարեն ցարդ կորստի մատնուած՝ ոսկեղնիկ բառերի կարգում «Բառափնջիկ», որովհետև արտագրութիւնը սպասում է մեկենասի:



Վ Ր Ի Պ Ը Կ Ն Ե Ր .

Էջ. Սխալ

5. թողել  
10. МАЛЬЧИКИ  
" յուզարկաւորութիւն  
16. բոսպէններում  
22. փոխադրած  
26. անյողողող  
27. ստյոգ  
18. Երկրող

Տող. Ուղիղ

18. թողել  
3. МАЛЬЧИШКИ  
31. յուզարկաւորութիւն  
6. բոսպէններում  
30. փոխադարձ  
2. անյողողող  
5. ստոյգ  
" Երկրորդ

---

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

---

Ցանկացողները կարող են դիմել՝ Տփսիս, Երեւան  
Իգդիս՝ — գրասխանատուներին, կամ իրենց՝ — ներդրուածներին:

«Ազգային գրադարան»



NL0239292

55.355